խարհի, որում հրամայէ քեզ քաջախոհեան սպարապետն, բաց 'ի վերայ տանն հայոց և հրամայեմք քեզ զի արթուն պահեսցես զինուորք կարգալով 'ի ականջս նոցայ ամենայն աւուրս Շաբաթու յօրէնս հայաստանեաց զի ամենայն մասունս յօրինաց կալով մնասցէ 'ի միտս նոցայ, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ և բարեվարք տանն հայոց այսմ աւուր յամսեանն դեկտեմբերի 20. յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773։

Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին։

Միքայէլ Իշխան. ○

Մանուէլ Գծագիր ○

Ս. Տ. ○
Վ. Տ. ○
Գ. Տ. ○

Օրինակ նամակի հրաձի Զօրագլխուրեան։

ԳԼՈՒԽ ԿԴ.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան յաշխարհէն գուգարացոց և թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ և 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ մարտիրոսդ լինիլ տանն հայոց, տուաք քեզ նամակ շնորհաց և պաշտօն հրացի զինաց ժամանակաւ երիս ամաւ զի դու Տեառն մարտիրոս